

# ԱԶԳՈՒՄԿ

## ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتاك جريدة يومية سياسية وأدبية - الدائرة المسؤولة: إينا درويشيان

1500 L.Ռ. 74ԳԴ ՏԱԲԻ, ԹԻԻ 212 (20968) ՇԱԲԱԹ, 17 ՆՈՅԵՄԲԵՐ 2001 10 ԷԶ

## ԿԱՐԵԼԻ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՅԱՂԹԱՀԱՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՇՈՒՏ



Նախագահ Լաֆոնտ կ'ընդունի  
երեսփոխան Ղ. Աշքարը:

Նախագահ զօր- էմիլ Լահոուտ երէկ իր ընդունած երեսփոխաններուն հետ հանդիպումին ընթացքին գոհունակութիւն յայտնեց ներքին եւ արտաքին հակազդեցութիւններուն համար, որոնց մեծ մասը զօրակցութիւն կը յայտնէ չըջանալին եւ միջազգային զարգացումներուն առնչութեամբ Լիբանանի կեց-լածքին:

Նախագահ Լահոուտ հաւաստեց, որ վերջին շրջանին Լիբանանի կատարած արտաքին հաղորդակցու-թիւններուն ընթացքին ի յայտ եկած է հասկացողու-թիւն Լիբանանի ներկայացուցած կեցուածքին վերա-բերեալ, հակառակ Իսրայէլի փորձերուն, «որովհե-տեւ մեր ազգային ընտրանքները կը համապատաս-խանեն միջազգային օրէնքին եւ ՄԱԿի որոշումնե-րուն»:

Նախագահ Լահոուտ դիտել տուաւ, որ պետական պատասխանատուներուն միջեւ զօրակցութեան շնոր-հիւ կ'ելլի պիտի դառնայ յաղթահարել բազմաթիւ զօտալուծութիւններ, ի մասնաւորի առաջնահերթ նկատ-ւող տնտեսական տագնապը, որուն նկատմամբ կառավարութիւնը հանգրուանային ձեւով պիտի գոր-ծադրէ շարք մը միջոցառումներ:

Նախագահը նաեւ լաւատեսութիւն եւ վստահու-թիւն յայտնեց, թէ տնտեսական կեանքը պիտի կազ-դուրուի եւ Լիբանանի մէջ տիրող ապահովութիւնը Լիբանանի պիտի վերադարձնէ արաբական տնտեսա-կան եւ առեւտրական բեմերուն վրայ իր ներկայու-թիւնը, իսկ ներդրողները, մասնաւորապէս արաբ ներդրողները, պիտի մղէ վերադառնալու Պէյրութ՝ օգտուելու ապահովութենէն, ներդրումներու առիթ-ներէն եւ հարկային դիւրութիւններէն:

Երեսփոխանները ըսին, որ նախագահը նաեւ նկա-տել տուած է, որ 2002 տարուան պետական պիւտճէի մօտ օրէն որդեգրումը նոր թափ պիտի տայ տնտեսա-  
Շար.Ր՝ էջ 10

ՍՈՒՐԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ  
31ԴՆԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

### Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ

Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդ-րոնական Կոմիտէն Սուրիոյ մէջ Բարե-կարգչական շարժումի 31րդ տարեդարձին առիթով երէկ հետեւեալ շնորհաւորական հեռագիրը յղեց նախագահ Պաշշար Ասա-տի.

«Նորին վսեմութիւն նախագահ տըքթ. Պաշշար Ասատ  
Նախագահ Սուրիոյ Արաբական Հան-րապետութեան  
Դամասկոս

«Բարեկարգչական շարժումի 31րդ տա-րեդարձին առիթով, մեծարանքով եւ բարձր գնահատանքով կը ներկայանանք յեղափո-խութեան ղեկավարին, ազգի պահապանին եւ անոր գերիշխանութեան վահանին: Լի եւնք հաւատքով, որ Բարեկարգչական շար-ժումի սկզբունքներն ու քայլերը կը մնան օրինակ՝ ապատութեան եւ ինքնորոշման իրաւունքին համար ամենօրեայ պայքար մղող արաբ ժողովուրդներուն:

«Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդ-րոնական Կոմիտէն կ'ողջունէ նորին վսե-մութիւն նախագահ Պաշշար Ասատը եւ Սուրիոյ եղբայրական ժողովուրդին կը մաղ-թէ յառաջդիմութիւն, բարգաւաճում եւ տո-կունութիւն ընդդէմ բոլոր մարտահրաւեր-ներուն եւ դաւերուն»:

ԱԶԱԿՈՂՄԵԱՆՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ՓԵՐԷՄԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ ԲԱԽՈՒՄՆԵՐ՝ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՄԻՋԵՒ

Բախումներ ծայր տուին երէկ Արեւել-եան Երուսաղէմի մէջ, ուր իսրայէլացի զին-ւորներ արգիլեցին պաղեստինցիները մտնելու Աքսա մզկի-թը, Ռամատանի առա-ջին Ուրբաթ օրուան գլխաւոր աղօթքին մասնակցելու համար:

Իսրայէլեան ոստի-կանութիւնն ու քանա-կը ապահովութեան արտակարգ միջոցա-ռումներ որդեգրած էին, կանխարգիլելու համար խռովութիւն-ները, որոնք կրնային ծագիլ հաւաքական աղօթքի աւարտին: Մօտաւորապէս քա-ռասուն հազար պա-ղեստինցիներ ուղ-ղուեցան Աքսա, ուր 13 ամիս առաջ ծայր տուաւ պաղեստին-  
Շար.Ր՝ էջ 3



Իսրայէլացի զինուորներ կ'արգիլեն պաղեստինցի  
երիտասարդի մը մուտքը Աքսա մզկիթ:

եան երկրորդ ինթի-ֆատան, որ ցարդ աւե-լի քան 705 պաղես-տինցի եւ 188 իսրայէ-լացի զոհեր խլած է: Ոստիկանութիւնը ար-գիլեց երեսուն տարե-կանէն վար երիտա-սարդներուն Աքսա  
Շար.Ր՝ էջ 3

մուտքը, նկատի ունե-նալով, որ խռովարար-ները անոնց կարգին կ'ըլլան ընդհանրա-պէս: Պարսպապատ քաղաքին մուտքե-րուն սպասող պաղես-տինցիներուն  
Շար.Ր՝ էջ 3

## ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆԸ ՊԻՏԻ ՀԵՏԱՊՆԴԵՆ ԱՅՂԱՆԻՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԷՆ ԱՆԴԻՆ



Թալեպանցի՝ ձերբակալուած, Հիւսիսի Դաշիմի գիւղերէն կողմէ:

Մ. Նահանգներ եւ անոնց դաշնակիցները երէկ թափ տուած են Ու-սամա Պըն Լատէնի հե-տապնդումներու գործո-ղութիւններուն, իսկ  
ամերիկացի պաշտօնա-տար մը յայտնած է, որ անոր «Քալիտա» ցանցին բարձրաստիճան ղեկա-վարներէն մէկը յայտնա-պէս սպանուած է ամե-  
րիկեան օդային ուժակո-ծումներէն մէկուն ըն-թացքին:  
Ան ըսած է, որ Մոհա-մար Քալիտա  
Շար.Ր՝ էջ 2

## ՈՉՈՔ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱԴԻ ՏԱԳՆԱՊԸ ԿԸ ԴԻՏԷ ԱՅԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

Կ'ԸՍԷ Վ. ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վար-դան Օսկանեան ձայնափիւռի «Ազատութիւն» կա-յանին հետ հարցազրոյցի մը ընթացքին, անդրադար-ձած է ՄԱԿի 56րդ վեհաժողովի ընթացքին Ազրպէյ-ճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիեւի կողմէ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի ուղ-ղուած մեղադրանքներուն: Օսկանեան յայտնած է, որ ոչ ոք լուրջի կ'առնէ ազրպէյճանական կողմի յերիւ-րանքները, եւ թէ որքան բարձր ամպիոններէ հնչեն այդ յերիւրանքները, այդքան աւելի վատ անդրադարձ պիտի ունենան Ազրպէյճանին, եւ ոչ Հայաստանի հա-մար, որովհետեւ ոչ ոք Լեռնային Ղարաբաղի տագ-նապը կը դիտէ ահաբեկչութեան դիտանկիւնէն:

«Ազրպէյճան իբրեւ վտանգ կը տեսնէ այն իրողու-թիւնը, որ մենք կը հիմնաւորենք Լեռնային Ղարաբա-ղի անկախութեան եւ Հայաստանի հետ միաւորման պատճառներն ու իրաւական հիմքերը», յայտնած է նախարարը: Օսկանեան նաեւ ըսած է, թէ հակառակ կուլիեւի այն մեկնաբանութեան, թէ ինքնորոշման իրաւունքը Հարդարացներ երկրի մը տարածքային ամբողջականութեան խախտումը, ՄԱԿի օրէնքները թոյլ կու տան ինքնորոշման իրաւունքի կիրարկու-մը, յատկապէս երբ խնդրոյ առարկայ երկիրը տարի-ներով խախտած է մարդկային իրաւունքները եւ ընդ-հանրապէս կառավարման օրէնքները:

ԵԱՀԿի Մինսքի խմբակի համանախագահներու կող-կաս կատարած վերջին այցելութեան անդրադառնա-լով, նախարար Օսկանեան յայտնած է, թէ Պաքու մերժած է փարիզեան գործընթացը վերակենդանացը-նելու համանախագահներու մտադրութիւնը, ինչպէս նաեւ մերժած է անոնց ներկայացուցած նոր առա-ջարկները:

Անդրադառնալով թիւ 907 Թօղուածի առնչուող որոշումին վերախմբագրուած տարբերակին, Օսկանե-ան յայտնած է, թէ նոր բանաձեւում մէջ յստակօ-րէն կ'ըսուի, թէ Ազրպէյճանին տրամադրուելիք որե-ւէ օգնութիւն օգտագործելի չէ Լեռնային Ղարաբա-ղի կամ Հայաստանի դէմ:

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՒԱՐՏԵՑ ԵՐԵՒԱՆ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Եոթեայ պաշտօնական այցելութեան մը համար Հայաստան գտնուող Լեհաստա-նի նախագահ Ալեքսանտր Կվաշնեւսքիի գլխաւորած պատուիրակութիւնը երէկ այ-ցելեց Երեւանի Մատենադարան: Պատուի-րակութիւնը ապա Ս. Էջմիածնի մէջ հան-դիպում ունեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին հետ:

Պաշտօնական այցելութեան աւարտին նախագահներ Ռոպէրթ Քոչարեան եւ Ալեք-սանտր Կվաշնեւսքի ունեցան կարճ հան-դիպում մը, որմէ ետք նախագահի նստա-վայրին մէջ տեղի ունեցաւ հրաժեշտի պաշ-տօնական արարողութիւն: Այնուհետեւ, Կվաշնեւսքիի գլխաւորած պատուիրակու-թիւնը մեկնեցաւ «Չուարթնոց» օդակայան:

ՀՈԿԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԸ՝

## ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. Վ. ՉՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԸ՝

## Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

## ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԽՕՍԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՀ ՊԸՐՐԻԻ

ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՅԻՔ ՀԱՐԻՐԻԻ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Տեղի կ'ունենայ Զորքալարթի, 21 Նոյեմբեր 2001, երեկոյեան ժամը 8:00ին, ԵՌԻՆԵՍՔՕԻ սրահին մէջ:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՍՊԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԸ



Դեսպան Սարաֆեան այցելեց  
վարչապետ Հարիրիին:

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երէկ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Քանաութի դեսպան Հայկ Սարաֆեանի: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ ելեմուտքի նախարար Յուսէֆ Սիմոնը:

Հանդիպումին ետք Սարաֆեան յայտնեց, որ արծարծուած են Քանաութի կողմէ Լիբանանի ելեմուտքի նախարարութեան տրամադրուած օժանդակութիւնները, եւ վարչապետ Հարիրի ներկայացուցած է Լիբանանի օժանդակութիւն տրամադրող երկիրներու փարիզ-2 ժողովի շարունակուող նախապատրաստական աշխատանքը, հաւանական նկատելով, որ այս ժողովը գումարուի յառաջիկայ տարեկիզբին:

Սարաֆեան հաւաստեց, որ Քանաութ ներկայ պիտի գտնուի այդ ժողովին:

## ՖԻՖԱԷՆ ՕՏԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց ՅիՖԱ – Կոլ ծրագիրի պատասխանատու Ժուստին Սամուէլը, որուն կ'ընկերակցէին Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Պաիիթ Ապու Համպէ եւ անդամ Մուսթաֆա Համտան:

Ապու Համպէ յայտնեց, որ նախարար Յովնանեանի ներկայացուցած են ՅիՖԱի կողմէ Լիբանանի տրամադրուած օժանդակութեան ծրագիրը՝ 400 հազար տոլար, որ մարպուսի կեդրոններու եւ կառոյցներու պիտի յատկացուի: Նախարար Յովնանեան շնորհակալութիւն յայտնեց ՅիՖԱին եւ պատրաստակամութիւն յայտնեց շարունակելու գործակցութիւնը:

Յովնանեան նաեւ ընդունեց Միջազգային Ողիմպիական յանձնախումբի անդամ Թոնի խուրին, որ ներկայացուց Զինաստանի Ողիմպիական մրցաշարքի մթնոլորտը եւ շնորհակալութիւն յայտնեց մարպական միութիւններուն եւ ֆետերասիոններուն նախարար Յովնանեանի տրամադրած օժանդակութիւններուն համար:

## ՏԱԿԱԻՆ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ Է

Ներքին գործոց նախարարութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը նկատել տուաւ, որ խորհրդարանին յղուած է որսորդութիւնը թոյլատրելու օրինագիծ մը, որուն վաւերացումէն ետք նախարարութիւնը պիտի ճշդէ անոր գործադրութեան ձեւերը, մինչ այդ ի զօրու կը մնայ որսորդութիւնը արգիւղող որոշումը եւ օրինագիծները կ'ենթարկուին դատական հետապնդումի:

### «ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●Սեպուհ Շահպազեանի մահուան քառասունըփն առիթով,  
Տէր եւ տիկին Գրիգոր Աբրահամեան 100\$

## ՀԱՅ ԳԻՐՔԻ ԶԵՂՉ-ՎԱՃԱՌՔ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ՝  
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ  
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սիրով կը հրաւիրենք ձեզ Մենի Տաճն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գիրքերու տարեկան գեղջ-վաճառք ցուցահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 17 Նոյեմբեր 2001, երեկոյեան ժամը 6:00ին, «Կիլիկիա» բանգարանի սրահին մէջ:

Յուցահանդէսը կը մասնակցին Կաթողիկոսարանի, Համագայիցի, Կիրակնօրեայի, Տօնիկեան, Շիրակ, Ոսկեդար, Գառնի, Սիփան հրատարակչատուները եւ անհատ հեղինակներ:

Յուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ 2 Դեկտեմբեր 2001, ամէն օր առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 7:00:

ԱՅՆԷԼ ՀԸԼՈՒԷ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԻՆ ՇՈՒՐՁ

## ԲԱՆԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ԿԻՐԱՐԿԵԼ ԱՊԱՏՈՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Չինուորական աւագ քննիչ դատաւապ Ռիատ Թալիի երէկ հարցաքննեց Այնէլ Հըլուէ գաղթական լաւին մուտքին գտնուող բանակի անցարգելի վրայ 14/11/2001ին, 23/10/2001ին եւ 29/10/2001ին տիրանալիք նետելու յանցանքով ամբաստանուած Ֆատի Սուրբ եւ Օմար Հաժը. ան կասկածելիները արգելափակուած պահելու հրամանագիր տուաւ:

Միւս կողմէ, բանակը շարունակեց Այնէլ Հըլուէի շուրջ իր ապահովական միջոցառումներու գործադրութիւնը: Բանա-

կային ջոկատներ շրջագայեցան գաղթականին շուրջ, իսկ անցարգելիներու վրայ խուսափութեան ենթարկուեցան ինքնաշարժներ, իսկ ստուգուեցան անցորդներու ինքնութիւնը:

Պաղեստինի Ապատագրութեան Կապմակերպութեան մասկալմող խմբաւորումներու Լիբանանի մէջ ներկայացուցիչները երէկ գումարեցին արտակարգ ժողով մը, որուն աւարտին հրապարակուած հաղորդագրութեան մէջ նկատել տուին, թէ իրենք Լիբանան կը գտնուին պարտադիր եւ ժամանակա-

ւոր ձեւով, իբրեւ հիւրեր եւ կը յարգեն օրէնքներն ու իշխանութիւնները: «Գաղթականներուն շուրջ գտնուող լիբանանեան ապահովութեան ուժերուն դէմ որեւէ արարք ուղղուած է նաեւ մեր գաղթականներուն եւ անոնց բնակչութեան դէմ, եւ կը նպաստէ միայն թշնամի Իսրայէլի: Ուստի ձեռնածալ պիտի չմնանք եւ մեր կարողութիւնները կը դնենք մեր լիբանանցի եղբայրներու տրամադրութեան տակ», ըսաւ հաղորդագրութիւնը:

## ՌԱՄԱՏԱՆ ԱՄԻՍԸ ՄԿՍԱԻ

Փաթուկայի Տունը յայտարարեց, որ երէկ՝ Ուրբաթ, Ռամատան ամիսի առաջին օրն էր, մինչ Շիիներու Գերագոյն խորհուրդը յայտարարեց, որ այսօր, Շաբաթ, կը սկսի այդ ամիսը:

Արդարեւ, հանրապետութեան միւլֆի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանիի անուանով նախանցեալ օր հրապարակուած իր հաղորդագրութեան մէջ Փաթուկայի Տունը աստղագիտական հաշիւներու վրայ հիմնուելով յայտարարեց, թէ Ուրբաթ օր կը սկսի Ռա-

մատանը: Այս առիթով հաղորդագրութիւնը փոխանցեց միւլֆի Քապպանիի պատգամը՝ Աստուծոյ, պաշտամունքի եւ ծոմապահութեան այս ամիսը օգտագործելու հոգիները մաքրելու եւ Աստուծոյ մօտենալու համար:

Շիիներու Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ, ճապարակներու միւլֆի շէյխ Ապտէլ խմիր Քապպան յայտարարեց, որ խորհուրդը որդեգրած է Ռամատան եւ իրան ամիսներու սկիզբը նոր լուսինը աչքով տես-

նելու սկզբունքը, եւ ասկէ մեկնած կապի մէջ մտած է իսլամական աշխարհի տարբեր վայրերու մէջ գտնուող անձերու հետ, եւ անոնցմէ ոչ մէկը հաղորդած է, թէ տեսած է նոր լուսինը, ուստի Ռամատան ամսու սկիզբը կը համարուի Շաբաթ օրը:

Այս առիթով ուղղուած իր պատգամին մէջ շէյխ Քապպանի բացատրեց Ռամատանի խորհուրդը եւ կոչ ուղղեց աւելի եւս կառչելու աստուածահաճոյ առաքինութիւններուն:

## ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՌԻՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

ներ, որոնց շարքին Մ. Նահանգներու՝ բաւալի ղաշնակից Փաթիստանի զինուորական ղեկավար զօրավար Փերվէջ Մուշարաֆ, կոչ ուղղած էին, որ ռմբակոծումները դադարին Ռամատանի ընթացքին:

Նախագահ Ճորճ Պուշ, որ կ'ուզէ ամէն զեղով խուսափել իսլամները վերաւորելէ, ողջունած է իսլամները՝ Մ. Նահանգներու եւ աշխարհի տարածքին, առանց նշելու պատերազմը:

Թալեպաններէն նոր ազատագրուած Քապուլի մէջ, ընտելեցնող հաւաքուած են մզկիթներու մէջ եւ քարոզիչներ Ուրբաթ օրուան աղօթքները օգտագործած են՝ կոչ ուղղելու համար հաւատացեալներուն, որ հետապնդեն Ուսամա Պըն Լատէնի գիտելները:

Թալեպաններու գերագոյն ղեկավար մոլլա Օմար երէկ ազատ կ'մնար: Ան հազուագիւտ հարցազրոյցի մը մէջ

մէք Աթէֆ կրնայ բանի մը՝ այլ բարձրաստիճան միւլֆի պաշտօնատարներու կողքին սպաննուած ըլլալ՝ Քապուլի մէջ տան մը դէմ տեղի ունեցած ամերիկեան ռմբակոծումներու ընթացքին:

Մինչ թալեպան զինեալներ, հարաւային իրենց միջնաբերդին՝ Գանտահարի մէջ, պաշարուած կը մնային, ամերիկեան օդանաւեր կը ռմբակոծէին քաղաքը, իսկ աֆղան ցեղախումբերու ղեկավարներ հարաւի մէջ ժողովրդային ըմբոստութիւններու մասին կը խօսէին:

Բրիտանացի զինուորներ երէկ գետնի վրայ միացած են ամերիկեան ուժերու փոքր խմբակներուն, որոնք հարաւի մէջ Հիւսիսի Դաշինքին ուժերը կ'առաջնորդէին:

Մ. Նահանգներու պաշտպանութեան նա-

խարար Տոնըլտ Ռամսֆելտ թղթակիցներու յայտնած է, որ ամերիկեան մասնախտուակ ուժեր գործօն են հարաւային Աֆղանիստանի մէջ:

Ան ըսած է, որ անոնք կը սպաննեն այն թալեպանները, որոնք կը մերժեն անձատուր ըլլալ եւ «Քալիտա»ի զինեալներ, որոնք կը փորձեն մէկ վայրէջն միւսը անցնել:

Ռամսֆելտ յայտնած է, որ թալեպան եւ «Քալիտա»ի կարգ մը անձնաւորութիւններ Աֆղանիստանի մէջ ընդգիծմադրութեան կողմէ գերի բռնուած են եւ պիտի հարցաքննուին ամերիկեան ուժերուն կողմէ:

### ԶԻՆՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ՝ ԸԱԿԱՌԱԿԱՍՍԱՆԻՆ

Զինուորական գործողութիւնները երէկ շարունակուած են հակառակ Ռամատանի սկսուածին: Կարգ մը ղեկավար-

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Սեպուհ Շահպազեանի մահուան քառասունըփն առիթով, «Արտաշէս եւ Լուսին Տէր Խաչատուրեան» կրթական ֆոնդի եղած են հետեւեալ նուիրատուները.

Տէր եւ տիկին Տարոն Տէր Խաչատուրեան 50\$, տէր եւ տիկին Չարէ Տէր Խաչատուրեան 50,000 Լ. .:

ԼԻԼԻԹ  
ԲԵՇԵՇԵԱՆ  
ԸՆդ  
ՅԱԿՈԲ  
ՍԱԿՈԱՋԱՐԵԱՆ  
Նշանուած  
11 Նոյեմբեր 2001,  
Հայէպ

## ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՅԵՌԱԳԻՐՆԵՐ՝ ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏԻ

Սուրիոյ մէջ Բարեկարգչական շարժումի 31րդ տարեդարձին առիթով, բազմաթիւ լիբանանեան անճամաւորութիւններ եւ կազմակերպութիւններ հեռագիրներ յղեցին Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի:

Խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրզլի, երեսփոխաններ Մոհսէն Տալլու, Մոհամէտ Քապպանի եւ այլ անճամաւորութիւններ ու կազմակերպութիւններ իրենց հեռագիրներուն մէջ վեր առին Իսրայէլի դէմ ղեկելու արաբական ճիգին մէջ Սուրիոյ հիմնական դերը եւ վերահաստատեցին իրենց կառչածութիւնը Սուրիոյ հետ կապին եւ ղիմադրութեան իբրեւ արաբապատկան հողերը ազատագրելու միակ միջոց:

## ՈՒԱՇԻՆԿԹԸՆ Կ՝ՈՒՋԷ ՀԱՐՈՒԱԾԵԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Կ'ԸՍԷ ՇԵՅՄ ԶԱՍԷՍ

Հրգպալլայի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասէմ երէկ նկատել տուաւ, որ ահաբեկչութեան պատրուակով դրամատնային հաշիւներու սահեցման պահանջով ամերիկեան անուանացանկին գործնական նպատակն է հարուածել լիբանանեան տնտեսութիւնը եւ ոչ միայն լիբանանեան հատուած մը, ինչպէս նաեւ չիթթ ստեղծել լիբանանեան բեմին վրայ:

Ան ըսաւ, որ այս նոր սպառնալիքը Լիբանանի դէմ ամերիկեան տնտեսական ճնշումներու շարունակութիւնն է, եւ յիշեցուց, որ վերջին տարիներուն Միացեալ Նահանգներ Լիբանանի ոչ մէկ նշանակալից օժանդակութիւն տրամադրեցին, թէեւ Լիբանան դուրս եկած էր բոլորին վնաս պատճառած անկայուն եւ հակակշիռէ դուրս արարքներու մթնոլորտէն:

«Հրգպալլան ահաբեկչութեան անուանացանկերուն վրայ աւելցնելու քայլը տուաւ հակառակ արդիւնքը, որովհետեւ ան առիթ հանդիսացաւ ժողովրդային եւ պետական մակարդակի վրայ հանրաքուէի նման դիմադրութեան զօրավիգ կանգնող կեցուածքի միահամուռ արտայայտութեան», ըսաւ ան:

անդամներէն շատեր թամբակներու զօրավիգ կը կանգնին եւ որոնք աւանդականօրէն իշխած են երկրին:

### ՈՒՍԻԱ ԱՖՂԱՆԻՍԱՆԻ ՇԵՏ ԿԱՊԵՐԸ Կ՝ՈՒՋԷ ՎԵՐԱԿԱՍՍԱՆԵԼ

Ռուսիա երէկ արագօրէն թալեպաններու տապալումին առիթը օգտագործած է՝ Աֆղանիստան տարարած է, որ ան պիտի չարունակուի հետապնդումներու եւ անճամաւոր պաշտօնատարներու առաջին խմբակ մը:

Պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով ռուս թղթակիցներու յայտնած է, որ արտարութեան պաշտպանութեան եւ այլ նախարարութիւններէ պաշտօնատարներու խմբակ մը պիտի փորձէ «աշխատանքային կապեր հաստատել երկրին օրինական կառավարութեան ղեկավարութեան հետ»:

Ի տարբերութիւն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ, որոնք Աֆղանիստան ուժեր կը ղրկեն ուստեստեղէնի պաշտպանութեան ցրուումը պաշտպանելու համար, Ռուսիա բացարձակապէս մերժած է ուժեր ղրկել:

Ռուսիա իր դիւանագէտները Քապուլէն հեռացուցած էր 1990ական թուականներուն, երբ իշխանութիւնը փոխուած էր եւ Մոսկուայի ազդեցութիւնը տկարացած:

Միւս կողմէ, Եւրոպական Միութեան երկիրները երէկ սկզբունքային համաձայնութիւն մը գործադրեցին՝ Եւրոպայի տարածքին ձեռքաւարման հրամանագիրի մը գծով, որ վերջ պիտի տայ ահաբեկչութեան եւ ծանրակշիռ ոճիրներու պարագային արտայանձնումի երկարատեւ գործողութիւններուն:

(ՌՈՅԹԸՐԸ)

# ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՄԱՐ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ԻՐԱԲԻ ՎՐԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՅԱՐՉԱԿՈՒՄ ՄԸ ԿՐՄԻ ԽԱՍՏԱՍ

Սուրբիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ իստատամ երէկ ըսաւ, որ Դամասկոս անընդունելի կը նկատէ իրաքի դէմ մարտիկեան նոր յարձակում մը, որ կ'իյնայ ահաբեկչութեան դէմ յայտարարուած պատերազմի ծիրէն ներս:

իստատամ, որուն յայտարարութիւնը լոյս տեսած էր լիբանանեան «Մուսաքալալ» օրաթերթին մէջ, դիտել տուաւ, որ Սուրիա կը դատապարտէ Ուաշինկթընի եւ Նիւ Եորքի դէմ գործուած ահաբեկչական արարքները, սակայն կը մերժէ, որ ահաբեկչութեան դէմ պատերազմին թիրախները դառնան իրաքն ու Սուրիան, իրեւ «ահաբեկչութիւն հովանաւորող» երկիրներ:

իստատամի յայտարարութիւնը ցոյց կու տայ, որ Դամասկոսի եւ Ուաշինկթընի միջեւ վիճել բաւական խորացած է: Սուրիա կը մերժէ նաեւ ահաբեկչական շարժումներու շարքին դասել Հըզպալլան, որուն վրայ ճնշում կը պահանջէ Ուաշինկթըն:

Միւս կողմէ, իրաք յայտնեց, որ Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա կ'արգելակեն գործադրութիւնը աւելի քան վեց միլիառ տոլարի պայմանագրութիւնները, որոնք ստորագրուած են ՄԱԿի «քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագրի պայմաններուն տակ:

«ԻՆԱ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Լոնտոն եւ Ուաշինկթըն կ'ուղացնեն 2153 պայմանագրութիւններ: Անոնք կ'արգելեն, որ իրաք օդուորդի արտածած քարիւղի եկամուտներէն, դիտել տուաւ առեւտուրի նախարար Մոհամէտ Մեհտի Սալէ: Ան աւելցուց, որ ՄԱԿի պատժամիջոցներու յանձնախումբին մէջ ամերիկացի եւ բրիտանացի ներկայացուցիչները կ'արձագանգեն իրենց պետութիւններուն որդեգրած թշնամական կեցուածքին իրաքի դէմ: Սալէ պնդեց, որ ՄԱԿի ճամբով՝ Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա կ'ուզեն առաւելագոյն չափով վնաս պատճառել իրաքի: Սալէ ըսաւ նաեւ, որ քարիւղի ծրագիրը չի կրնար փոխարինել պատժամիջոցներու ջնջումը:

(ՌՈՅԹԸՐԶ)

1972Ի ՀԱԿԱՄԻՋՅԱՄԱԶԱՄԱՍԱՍՅԻՆ ՀՐԹԻՈՆԵՐՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

## ՊՈՒՇ - ՓՈՒԹԻՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶՀԱՐԹՈՒԵՑԱՆ



Փութին կը պատասխանէ ունկնդիրներուն հարցումներուն:

Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ եւ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին չեն կրցած զէնքերը հակալէռի տակ պահող բանալի մէկ համաձայնագրին գծով իրենց տարակարծութիւնները կամրջել: Հինգշաբթի օր, սակայն ասիկա արգելք չէ հանդիսացած, որ անոնք բարեկամական միջնորդութիւն մը մէջ աւարտեն իրենց վեճաժողովը:

Անոնք մամոյ ճաշիկի մը ընթացքին յայտնած են, թէ եւսօրեայ իրենց տեսակցութիւններուն ընթացքին չեն կրցած լուծել 1972ի հակամիջջամաքասային հրթիռներու համաձայնագրին գծով իրենց տարակարծութիւնները:

Պուշ քսած է, որ տարակարծութիւնները «մեզ իրեւ պետութիւններ պիտի չբաժնեն»:

Նախապէս Փութին Մ. Նահանգներու մէջ ձայնասփռելի ունկնդիրներու յայտնած է, թէ Ռուսիա ոչինչ կրնայ ընել, եթէ նախկին համայնապար ալ երկիրներ ուզեն ՕԹԱՆի անդամակցել:

(ՌՈՅԹԸՐԶ)

### ՄԱԿԵԴՈՆԻԱ

## ԱԼՊԱՆԱՅԻՆԵՐՈՒՆ Ի ՆՊԱՍԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԳԻԾ ՄԸ

Մ ա կ ե դ ո յ ի ո յ խորհրդարանը Ուրբաթ օր վաւերացուց բարեկարգումներու օրինագիծ մը, փոքրամասնութիւն կապող ալպանացիներու իրաւունքները պաշտպանելու համար:

Միւս կողմէ, Մակեդոնիոյ նախագահ Պոլիս Թրայքովսքի ներում շնորհեց նախկին ալպանացի ըմբոստներուն, ինչպէս նաեւ այլամբաստանեալներու՝ առանց ներառելու սակայն ՄԱԿի կողմէ պատերազմական ուժերուն ամբաստանեալները, որոնք արդէն դատաւարութեան կ'ենթարկուին:

Այս գծով արդարադատութեան նախարար յառաջիկայ շաբթուան ընթացքին նախագահին պիտի ներկայացնէ ներում ստանալիք բանտարկեալներու անուանացանկը:

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու խաւիէ Մոլանա ողջունեց Մակեդոնիոյ խորհրդարանին վաւերացուցած բարեկարգումները՝ յայտնելով, որ Եւրոպական Միութիւնը պիտի օժանդակէ Պալքաններու մէջ անկայունութիւնը եւ յարուած վիճակը խաղաղեցնելու:

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵՋ... Ծարուցակուած Ա. Էջէն

տինցիները, երբ արտօնութիւն չստացան ներս մտնելու, աղօթքի պահուն մօտակայ փողոցները մտան ու գետինը նստելով մասնակցեցան աղօթքին: Մնոնցմէ ոմանք նաեւ բախում ունեցան մուտքերը փակող ռատիկաններուն հետ: Ականատեսներ յայտնեցին, որ երեք պաղեստինցիներ վիրաւորուեցան:

### ԱՃԱԿՈՂՄԵԱՆՆԵՐ ԿԸ ՊԱՇԱՆՋԵՆ ՓԵՐԵՍԻ ՀՐԱՄԱՐԱԿԱՆԸ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն աշակողմեան շարժումներու ճնշումներուն ենթարկուեցաւ երէկ: Մնոնք վարչապետէն կր պահանջեն պաշտօնական ընել արտաքին գործոց նախարար Ժիւձն Փերէսը, որ ՄԱԿի Ընդհանուր Ժողովի նիստին ըսած էր, թէ Իսրայէլի մէջ պօրակցութիւն կայ պաղեստինեան պետութեան մը:

Աշակողմեան կուսակցութիւններու պահանջը աւելի բացայայտ կը դարձնէ տարակարծութիւնները Շարոնի կառավարութեան ընկերակիցներուն միջեւ: Մնոնց տարակարծութիւններուն առանցքը պաղեստինեան 13ամեայ ըմբոստութիւնը ճնշելու համար որդեգրուելիք քաղաքականութիւնն է:

ՄԱԿի Ընդհանուր Ժողովին դիմաց արտասանած իր խօսքին մէջ Փերէս ըսած էր, թէ Իսրայէլի մէջ շատեր պօրակից կր կանգնին պաղեստինեան կառավարութեան, հակառակ անոր որ ասիկա պաշտօնական կեցուածք չէ Շարոնի կառավարութեան: Փերէս աւելցուց, որ Իսրայէլ չ'ուզէ իր տիրապետութեան տակ պահել պաղեստինցիները: «Իսրայէլ կ'ուզէ, որ անոնք ապատշնչեն, նոր տնտեսութիւն մը հիմնեն, պահեն իրենց աւանդութիւնները, բարձրագոյն կրթութեան եւ ուսման առիթ ունենան, ինչպէս նաեւ՝ իսկական ապահովութիւնը երաշխաւորուի բոլոր կողմերուն», աւելցուց Փերէս:

Փերէս նախապէս ալ պօրակցութիւն յայտնած էր պաղեստինեան պետութեան մը հաստատման, սակայն առաջին անգամ ըլլալով ան միջապագային պաշտօնական բեմէ մը կը կատարէր յայտարարութիւնը: Աւելի ուշ, Փերէս թղթակիցներուն հետ պրոյքի մը ընթացքին ըսաւ, որ ասիկա իր անձնական տեսակէտն է, որ սակայն վստահ է, թէ կը բաժնեն իսրայէլացիներէն շատեր:

Շարոն իր կարգին վերջերս արտայայտուած էր պաղեստինեան պետութեան մը մասին, սակայն պաշտօնական գետնի վրայ այդ ուղղութեամբ որեւէ քայլ չէ առնուած, որովհետեւ Շարոնի համար խաղաղութեան բանակցութիւնները կը սկսին այն ատեն միայն, երբ պաղեստինեան իշխանութիւնը կը յաջողի սանձել ժայռայեղական շարժումներն ու անոնց հետեւորդները:

Շարոն անմիջապէս չհակադրածեց Փերէսի ձառին, սակայն աշակողմեան նախարարներու ալ պաշտօնատարներ դատապարտեցին Փերէսը, դիտել տալով, որ ան իրապօրում չէր այդպիսի յայտարարութիւն մը կատարելու: Ծայրայեղ ազգայնական նախարար Պենի Էլոն ըսաւ, որ իր կուսակցութիւնը՝ Ազգային Միութիւնը, շուտով ժողով մը պիտի գումարէ, որոշելու համար յառաջիկայ քայլը: Էլոն աւելցուց, որ թէեւ սպառնալ չի սիրեր, սակայն եթէ Փերէս կառավարութեան դուրս չդրուի, Ազգային Միութիւնը պիտի հրաժարի Շարոնի կառավարութեան ընկերակցութենէն:

Այսլորդանանի հրէական բնակեցման վայրերու խորհուրդը եւս պահանջեց, որ կառավարութիւնը որդեգրէ պաղեստինեան պետութեան մը հաստատումը մերժող բանաձեւ մը, այլապէս՝ խորհուրդը ազգայնական բոլոր կուսակցութիւններէն պիտի պահանջէ հրաժարիլ կառավարութենէն:

●ՀԱՐՎԸՐՏ համայնարանի դասախօս Սամուէլ Հանթինկթըն կոչ ուղղեց Միացեալ Նահանգներուն, որ չսպեն Իսրայէլի հետ կապերու սերտացումը եւ պօրակից կանգնին անկախ Պաղեստինի մը հիմնադրութեան, մեղմացնելու համար Արեւմտեքի եւ իսլամութեան միջեւ գոյութիւն ունեցող յարուածութիւնը:

(ՌՈՅԹԸՐԶ)

### ԱՅՈՒՆԻՍԱՆ

## ՊԱՏԵՐԱԶՍԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՆԵՔԱՐԻՂԱՏԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Վերջին երկու տասնամեակներուն Աֆղանիստանի մէջ տեղի ունեցած պատերազմները երկիրն մէջ ներդրումներ կատարելու հաւանականութիւնը անկարելի դարձուցած են, սակայն թալեպաններուն դէմ Միացեալ Նահանգներու եւ անոր դաշնակից Հիւսիսային Դաշինքի մղած պատերազմին յաջող աւարտը կրնայ կացութիւնը փոխել:

1990ականներուն, երբ կացութիւնը համեմատօրէն կայունացած էր, ամերիկեան «Եուկոքալ» քարիւղի ընկերութիւնը սկսած էր մշակել կասպեան քարիւղը Աֆղանիստանէն անցնող քարիւղատարով մը Փաքիստան եւ հոնկէ հարաւարեւելեան Ասիա հասցնելու ծրագիր մը, սակայն թալեպաններու իշխանութեան գլուխ անցնիլը մոռացութեան մատնած էր զայն:

Վերոյիշեալ ընկերութեան պաշտօնատարները հիմա եւս կը պնդեն, թէ պատրաստ չեն Աֆղանիստան վերադառնալու, սակայն ուրիշներ սկսած են հետաքրքրուիլ քարիւղատարով:

Ծրագիրը առաջ մղողներէն մէկն է Փաքիստանի նախագահ Փերվէշ Մուշարրաֆ, որ Միացեալ Նահանգներ իր այցելութեան ընթացքին ծրագրի շուրջ խորհրդակցութիւններ ունեցած է ամերիկացի ղեկավարներու հետ:

«Զեմ ըսեր, թէ ծրագիրը արագօրէն իրականանալի է, սակայն մարդիկ սկսած են անոր վրայ նստած փոշիները մաքրել», կը յայտնէ Ռեւանիւթի Ուսմանց Բէյմպիլիի հիմնարկի մասնագէտներէն՝ Ճէյմս Բլէտ, որ կ'աւելցնէ, թէ երկիրը որոշ քանակութեամբ արտադրելի քարիւղ եւ յատկանշական քանակութեամբ բնական կազի պահեստներ ունի:

## ՄԵՂԱԻՈՐ ԻՍԼԱՄՆԵՐՆ ԵՆ ԵՐԱՇՏԻՆ ՊԱՏՃԱՌԸ

ՌԻԱՏ, 16 (ՌՈՅԹԸՐԶ).— Մէուտցի կրօնաւորներ երաշտի պատճառ կը նկատեն մեղաւոր իսլամները: Անոնք կոչ ուղղեցին սէուտցիներուն, որ իրենց մեղքերուն թողութիւն խնդրեն՝ Աստուծոյ աղօթելով:

Մեքէի գլխաւոր մզկիթին քարոզիչը՝ չէյխ Օմար Պըն Մոհամէտ Սապիլ ըսաւ, որ Աստուծոյ կամքին չենթարկուելով, մեղքեր ու ոճիրներ գործելով մարդիկ պատճառ դարձած են, որ անձրեւ չտեղայ: Շէյխ Սապիլ կը խօսէր խումը մը հաւատացեալներու, որոնք հաւաքուած էին աղօթելու անձրեւի համար:

Ֆահտ թագաւոր իր կարգին քաղաքացիներէն պահանջեց աղօթել, որպէսզի Մէուտական Արաբիոյ տարածքին անձրեւէ՝ փրկելու համար երկիրը երաշտէ: Երրորդ տարին ըլլալով Մէուտական Արաբիոյ մէջ անձրեւները կ'ուշանան:

Սուրբիոյ մէջ ալ չուրի տագնապ կայ, որովհետեւ հոն եւս երեք տարիէ ի վեր, անձրեւներու քանակը նուազած է: Սուրիացիները ջուրի տագնապին պատճառ կը նկատեն Տիգրիսի եւ Եփրատի վրայ կառուցուած ամբարտակները: Հակառակ այս իրողութեան սակայն, Սուրբիոյ նախագահ Պաշար Ասատ եւս սուրիացիներէն պահանջեց աղօթել, որպէսզի ջուրի տագնապէն անձրեւներով փրկուին:

## ԳՈՐԾԱԾԵՅԷ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

**ԻՆՉՊԵՍ**  
**ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը**

Ձեր ինքնաշարժից պեմզինից, մագուրթից, իւղից, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումից հետ միաժամանակ ցերկայացուցեք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

**ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը**

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅՏԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Համագայիցի գրախանութ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Ջալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիլիաս

**ԶԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱԸ ԶՐԻՕՐԵԼ**

**FUEL CARDԸ ԿՐԱԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴԵՏԵԲԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ**

1. CORAL JAL EL DIB, Ժլ Էլ Տիպ
2. HYPCO ANTELAS, Կարաթ Ալ Դաուարնէ
3. SPEED ANTELAS, Կարթիկիսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապատի մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նաիր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տիւ Լիպանցէ առաջ
7. MEDCO KARANTINA, Զարաթիկի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Միխայել, Սաադ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալէի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաուր պանդոկից կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ամազա»ի կից

**Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնէ՝ 01-242556 քիւի:**

Մագուրթի սպասարկութեան համար հեռաձայնէ՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւիներուն:

**ԱՐԺԷԲԱՌՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔԵՆԱՇԱՐԺ ՄԸ**

# ԵՐԵՒԱՆԻ ՄԱՍԻՆ ԱԿՈՒՄԲԵ ԴԱԴՐԵՅՈՒՅԱԾԷ ՀԱՅ ԵՒ ԱԶԵՐԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՓՈԽԱԴԱՐՉ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

«Արմինֆո» լրատու գործակալությունը կը տեղեկացնէ, թէ Երեւանի Մամուլ Ակումբի նախագահ Պորիս Նաւասարդեան յայտնած է, թէ Մամուլ Ակումբը պիտի դադրեցնէ հայ եւ ազերի լրագրողներու միջեւ տեղի ունեցող փոխադարձ այցելութիւնները՝ ազերիական մամուլին մէջ ստեղծուած լարուած վիճակին պատճառով։ Ան ըսած է, թէ Ազրպէյճանի արհեստականօրէն լարուած կացութեան մէջ այս այցելութիւնները մթնոլորտը աւելի եւս կը լարեն։ Ըստ Պ. Նաւասարդեանի, Ազրպէյճանի մէջ լարուած մթնոլորտը ստեղծուած չէ լրագրողներուն կողմէ, այլ՝ «կու գայ վերէն»։ Ան նաեւ աւելցուցած է, թէ ամէն պարագայի Երեւանի Մամուլ Ակումբը պատրաստ է օժանդակելու հայ եւ ազերի լրագրողներուն աշխատանքային փոխադարձ այցելութիւններուն։ Ան նշած է, թէ 2002-ին սկսեալ երկու երկիրներուն մամուլի ներկայացուցիչներուն համար կը ծրագրուի կազմակերպել պետական անձնակազմութիւններու հետ մամուլի ասուլիսներ։

## ՔԱՆԱՏԱԿԱՆ ԾԱՄԱՌՈՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԸ

«Քալիֆորնիա Քուրիըր Օն Լայն» կը յայտնէ, թէ իրենց անկախութեան ի վեր առաջին անգամ ըլլալով Հայաստանը եւ Լեւոնային Ղարաբաղը, իբրեւ արկածախնդրական արձակուրդի վայրեր, տեղ գտած են ճամբորդական միջազգային ամսաթերթի մը մէջ։ Քանատայի մէջ հրատարակուող «Աուսթփոսթ Մէկըզնը»-ը, որ երկրին մէջ ամէնէն լայն շրջանառութիւն ունեցող ճամբորդական ամսաթերթն է, չորս պատկերազարդ էջեր յատկացուած է Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի։ Ներկայացուած են Հայաստանի կրօնական աւանդը, բնութիւնը եւ ժողովուրդը, ինչպէս նաեւ հեղինակներու ճամբորդութեան ընթացքին հաւաքուած անեքսոսներ։ Յօդուածը գրուած է պատկերազարդուած է Մաթիոս Քարանանի (Ուաշինկթըն) եւ Ռոպերթ Քիւրքեանի (Լոս Անջելէս) կողմէ։ Անոնք ըսած են, թէ իրենց նպատակը եղած է Հայաստանի նկատմամբ հետաքրքրութիւն արթնցնել։ «Կը փորձեմ հասնիլ մարդոց, որոնք այլապէս բնւոյ պիտի չլսէին Հայաստանի մասին։ Եթէ մարդիկ պիտի հետաքրքրուին Հայաստանով, նախապէս պէտք է անոր մասին տեղեկ ըլլան», ըսած է Մ. Քարանանի։ Նշեցք, որ Ռ. Քիւրքեանն եւ Մ. Քարանան հեղինակները են այս տարուան Յունիսի հրատարակուած «ժամանակի եզրը» Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի մէջ ճամբորդութիւն» անգլերէնով ճամբորդական գրքոյկին։ Անոնք նաեւ շուրջ երկու տարի առաջ հրատարակեցին «Աուսթ Կոսթ» պատկերազարդը։

## ԱՊՈՒ ԱՆԴԱՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԶԱՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ «ԱՌԱՒԵԼԱՊԷՍ ԱԶԱՏ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅՈՂ» ԵՐԿԻՐ

Ուաշինկթընի «ժամանակութիւն» Հիմնադրամի եւ «Ուոլ Սթրիթ Ժընըլ» թերթին կազմակերպած «Տնտեսական ազատութեան ցուցիչ» ուսումնասիրութեան տուեալներուն համաձայն, ԱՊՀի անդամ երկիրներուն շարքին միայն Հայաստանը ճանչցուած է իբրեւ «առաւելագոյն ազատ տնտեսութիւն ունեցող» երկիր եւ 156 պետութիւններու ցուցակին մէջ կը գրաւէ 45րդ տեղը։ Ուսումնասիրութեան մէջ կը նշուի, որ Հայաստանի առեւտրական զրուցիւնը ամէնէն ազատականն է ԱՊՀի երկիրներու մէջ, սակայն Ազրպէյճանի եւ Թուրքիոյ հետ առեւտրական յարաբերութիւններու քաղաքականութիւնը կը նուազեցնէ անոր արդիւնաւէտութիւնը։ «Տնտեսական ազատութեան ցուցիչ» ուսումնասիրութեան հեղինակները նշած են, որ Հայաստանի մէջ լաւ պայմաններ ստեղծուած են օտար ներգրուածներուն ներգրուածման համար, իսկ դրամատնային ոլորտի նկատմամբ պետութեան հսկողութիւնը նուազագոյնն է։ Ըստ ուսումնասիրութեան տուեալներուն, Վրաստանը նկատուած է «առաւելագոյն ոչ ազատ տնտեսութիւն ունեցող» երկիր եւ կը գրաւէ 118րդ տեղը։

[www.lemagan.com](http://www.lemagan.com)

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ  
ՀԱՍՑԵՆ

HAMPIG SASSOUNIAN  
CSP - L.A.C. B - 5 - 131 44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536 — USA

## Հ.Մ.Ը.ՄԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԶՐԶԱՆԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԻՒՆ

# ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

2001 - 2002 տարեշրջանի սկսուող տարեկան ծրագրի-րէն մեկնելով եւ համա-կարգելու համար շրջանի մասնաճիւղերուն ընդ-հանուր աշխատանքնե-րը, ինչպէս նաեւ սկսու-տական շարքերու դաս-տիարակչական աշխա-տանքի լծուած իր խմբա-պետները վերադարձա-ւորելու համար,

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի շրջանային խմբապետու-թիւնը կազմակերպեց խմբապետական սեմի-նար մը, Բըրնէթ Շա-հուանի Ս. Պետրոս կեդ-րոնին մէջ։ Այս սեմինա-րին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.Ի զանազան մասնաճիւղերէ փոխ խմբապետ եւ անկէ վեր պաշտօն ունեցողները, թիւով՝ 43 հոգի։

Սեմինարը, որ ունե-ցաւ յաջող ընթացք եւ դաստիարակչական օգ-տաշատ յայտագիր, պաշ-տօնապէս սկսաւ Շա-րաթ, 10 Նոյեմբերի ժամը 5:00-ին, «ՈՎ Հայ Արի» քայլերգով, որմէ ետք



Սեմինարին մասնակիցները։

Շրջանային Սկսուող-կան Խորհուրդի ատենա-պետ Գէորգ Այանեան ողջունելով ներկաները՝ անդադարձաւ սեմինա-րի ընթացքին եւ կարեւո-րութեան շեշտելով անոր անհրաժեշտու-թիւնը սկսուող տարե-կաններին մէջ։

Յայտագիրը ընդգրկեց 7 դասախօսութիւններ եւ զրոյց - քննարկում մը՝ խմբապետները յուզող այժմեական հարցերու շուրջ։

Սեմինարին յայտագի-րը կ'ընդգրկէր հետեւեալ նիւթերը, որոնց շուրջ տրուեցան համապատաս-խան դասախօսութիւն-ներ։

- «Որակաւոր սկսու-տութիւն ունենալու տը-բաւելը»՝ Յարէս Խալի-ֆէ (Լիբանանեան սկսուող տարեկան ֆետե-րասիոնի նախկին դաս-տիարակ - խմբապետ)։

- «Ինչպէս ապահովել անդամներու թիւի ան-հատ Պաթրոնի (Լիբա-նանեան սկսուող տարե-կան ֆետերասիոնի նախկին ֆայլիկ ճիւղի խմբապետ)։



Սեմինարին մասնակիցները կը հետեւին անոր աշխատանքներուն։

- «Հ.Մ.Ը.Մ.Ի կազմա-կերպական կառույցը եւ խմբապետներու դերը», Ներսէս Տօնիկեան։

- «Հ.Մ.Ը.Մ.Ի սկսու-տութեան փորձը», Վաչէ Նաճարեան։

«Պատասխանա-տուի ղեկը աստիճանա-ւորական, միաւորի, մասնաճիւղի եւ մասնա-ճիւղերու խմբապետա-կան ընդհանուր ժողով-ներուն մէջ», Կարպիս Գապասաքաւեան։

- «Սկսուող տարեկան յայ-նարին մէջ»

ծուցեալներէ փոխյա-րաբերութիւնը տղոց տարիքի բաղդատմամբ (3 տարեկանէն մինչեւ 20 տարեկան)», Սիմոն Խուրի (Լիբանանեան սկսուող տարեկան ֆետե-րասիոնի արի ճիւղի խմբապետ)։

Գիտելիքներու վերո-յիշեալ նիւթերը փոխա-նցուեցան փորձարկումի, գրոյցի, տուեալ վիճակի քննարկումի եւ դասախո-սական զրուցեալներէ։

Դասախօսութիւննե-րու աւարտին մասնակ-ցողներուն բաժնուեցան յատուկ հարցարաններ՝ արժեւորելու համար սե-մինարին ստացած իրենց գիտելիքները։ Ապա խօսք առաւ Շրջանային խմբա-պետ Կարո Մուրաշան-եան, որ զնահատեց սե-մինարին մասնակցողնե-րը եւ ըսաւ, թէ պէտք չէ բաւարարուիլ այս տե-սակի աշխատանքներու մասնակցելով, այլ պէտք է փորձել տեսութիւննե-րը գործնականացնել՝ սկսուող տարեկան զերագոյն նպատակներուն ծառա-յելու համար։

Համագումարը փակ-ւեցաւ Կիրակի, 11 Նոյեմ-բերի ժամը 4:30-ին, «Յա-նաջ Նահատակ» քայլեր-գով։

Շիրակ Հրատարակչատան  
նորութիւնը

Գիրքերու ցուցահանդէսին առթիւ

ԱԼԵՔՍԱՆՏՐ ՆԱԺԺԱՐԻ

Պատերազմի Դպրոցը

Թարգմանիչ՝  
Գ. ՀԱՎԻՏԵԱՆ

Այս գիրքին Ֆրանսերէն բնագիրը առաջին հրատարակութեամբ լոյս տեսած է Balland հրատարակչատունէն «L'Ecole de la guerre» վերնագիրով։

Ա Ֆ Ի Լ

ԻՆԵՆԱՇԱՐԺԻ  
ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

85\$

●SOS FREE OF CHARGE  
ԻՆԵՆԱՇԱՐԺԻ ՓՈԽԱՐՈՒԹԵԱՆ  
ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ

ՀԱՍՑԵ.- ԱՅԵՏԻ ԾԵՆԸ Բ. ՅԱՐԿ  
ԴԵՆ. 01-242556 եւ 01-242557

## «ՆԱՀՆԱ ՄԱՆ ԿՈՄԻՏԱՍ»

«Նահանա մա կոմիտաս», կը յայտարարէր վաթսուցամեայ մարդ մը, որուն կ'ընկերանա-յին կողակիցն ու այլ կից մը։ Ո՛ւր է Կոմիտա-սի սնտուկը...

Թրիփուի քաղաքի Ռաշիտ Քարամէի ան-ւան համալիրին մէջ ենք։ Հսկայ սրահը գրե-թէ բերնէ բերն լեցուն է։ Հինգշաբթի, Նոյեմ-բեր ամսուան առաջին օրն է։ Տեղի Կ'ունենայ երգի մրցում՝ լիբանանեան հինգ երգչախում-բերու միջեւ։

Խօսնակը կ'ողջունէ խումբերը, որոնք եկած են տարբեր շրջաններէ։ Պաշտօնաւոր համալսա-րանէն, Նոթթը Տամ համալսարանէն, Բիւզան-դական երգչախումբ, Լիբանանեան Արդի երգ-չախումբ եւ... Կոմիտաս երգչախումբ, հեռա-ւոր Պեքալէն։ Այո՛, Համագայիցի «Պ. Սե-ւակ» մասնաճիւղի երգչախումբ, հայկական միակ մասնակից խումբը, ղեկավարութեամբ Պ. Թաւազեանի։

Իւրաքանչիւր երգչախումբ ունի որոշ իւ-րայատկութիւն մը։ Իւրաքանչիւր խումբ հետը բերած է մեծ թիւով համակիրներ։ Համեստ է Կոմիտասի համակիրներուն թիւը, դժբախտա-բար։ Սակայն...

Առաջին երգչախումբ, երկրորդ երգչա-խումբ... Երրորդ Կոմիտասն է... Տղաքն ու աղ-ջիկները ինքնավստահութեամբ բեմ կը բարձ-րանան։ Բեմ կը բարձրանայ նաեւ խմբավարը։ Հանդիսատես ունկնդիրները առաջին դրական ապրումը կ'ունենան, ի տես Կոմիտասի տարա-գին, կարգապահութեան եւ կենդանութիւն։ Եր-գերը կը յաջորդեն իրարու... «Աւէ Մարիէ», «Կիւլիւզար», «Կամենք», «Հայրենաց սի-րով»... Ժողովուրդին բուն ծափահարութիւն-ները աւելի թոյլ չկու տան մեր տղոց եւ աղ-ջիկներուն... Իսկ Սեյիտ Տերվիշի «Ալ Հիւրա Տի»-ն, կ'արժանանայ որոտընդոտ ծափահա-րութեան։ Բոլորն ալ շշմած են...

Ապա մնացեալ երկու խումբերը ելոյթ կ'ու-նենան...

Դադարին ժողովուրդը կը կատարէ քուէար-կութիւն։ Հինգ սնտուկներ դրուած են, իւրա-քանչիւր խումբին՝ սնտուկ մը։ Մրցանակ մը պիտի տրուի ժողովուրդին քուէարկութեան արդիւնքին լոյսին տակ։ Ի՞նչ յոյս կարելի էր կապել քուէարկութեան մը վրայ, երբ քու-քուէարկողները այնքան համեստ են թիւով։ Մինչ այդ...

... Մեր առջեւի շարքին վրայ նստած երի-տասարդուհի մը ափսոսանքով կը յայտնէ, որ իր քոյրն ու ընկերուհին կանուխ մեկնած էին սահման. այլապէս անոնց քուէները եւս պիտի իյնային «Կոմիտաս» սնտուկին մէջ... «գոնէ ես առնէի անոնց քուէաթերթիկները...», կ'ափ-սոսայ տեղացի օրիորդը...

Իսկ վերեւ յիշուած պարոնը կը փնտռէր «Կոմիտաս» սնտուկը՝ բարձրաձայն յայտա-րարելով, որ ինք «Կոմիտաս»ի հետն է։

Երբ քուէաթերթիկները կը հաշուեն, ի յայտ կու գայ, որ «Կոմիտաս» շահած է երկրորդ դիրքը, հակառակ անոր, որ մեր հայ քուէար-կողները այնքան սակաւաթիւ էին... «Կոմի-տաս» գրաւած էր սրտերը հանդիսատեսնե-րուն։

